ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՈՒՄ ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ

Դեկտեմբերի 6-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանի ձեռամբ վերաօծվեց Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասում գտնվող Ս. Կարապետ եկեղեցին, որը կառուցվել է 1628 թ. Աստվածատուր երեցի կողմից: Այն վերակառուցվել է ռուսաստանաբնակ գործարար Աշոտ Գևորգյանի հովանավորությամբ:

Վերաօծումից հետո ներկաներին իր օրհնությունն ու բարեմաղթանքը փոխանցեց առաջնորդ Սրբազան Հայրը՝ ընգծելով, որ եկեղեցու քարեղեն կառույցը պետք է մեր հոգու և սրտի տաճարը դարձնենք՝ աղոթքով և եկեղեցական արարողություններին մեր մասնակցությամբ: Առաքել Սրբազանը նաև իր գնահատանքը փոխանցեց Ս. Կարապետ եկեղեցու վերակառուցման բարերարին՝ հույս հայտնելով, որ վերաօծված եկեղեցին օրհնություն կլինի ողջ Հրազդան քաղաքի համար:

Վերաօծման արարողությանը ներկա էին Հրազդանի քաղաքապետ Արամ Դանիելյանը, այլ պաշտոնատար անձինք, Կոտայքի թեմի հոգևոր սպասավորները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ